



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 145

ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ

Պիպի փառաբանեմ քեզ, իմ Թագաւոր Աստուածս,
քու անունդ պիպի օրհնաբանեմ յաւիտեանէ յաւիտեան:
Բարեգութ եւ ողորմած է Տէրը,
համբերաբար եւ սիրով լեցուն:
Թագաւորութիւնդ բոլոր ժամանակներուն համար է,
եւ Կերութիւնդ՝ բոլոր սերունդներուն համար:
Տէրը հաւաքարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,
նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:
Տէրը նեցուկ կը կանգնի անոնց՝ որոնք իյնալու վրայ են,
եւ ուրքի կը կանգնէ բոլոր գորածները:
Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,
բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:
Անիկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,
անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:
Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,
մինչ կորուստի կը մտարնէ բոլոր ամբարիշտները:
Ես օրհներգութիւն պիպի ընծայեմ Տիրոջ,
եւ թող ամէն արարած օրհնաբանէ անոր սուրբ անունը
յաւիտեանէ յաւիտեան: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ԱՍՏՎԵՆ

4:1-6

ԱՍՏՈՒԾՈՒՅ ԿԱՄՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՊՐԻԼ (4:1-6)

Պետրոս Առաքեալ սրացնելով քաղցր պարպականությունը արածելու Քրիստոսի հօսքը, կը շարունակէ իր յորդորները, պարգամները փոխանցելու հաւաքացեալներուն, ըսելու համար թէ անգամ մը որ Քրիստոսի միացաք, պէք է արմարական փոփոխութիւն ըլլայ ձեր մէջ, քան այն ինչ որ էիք երբ մեղքին սարուկն էիք: Թէև Քրիստոսով մեղքը իշխանութիւն չունի այլևս, բայց փակաւին կայ, եւ այս երկրաւոր կեանքի ընթացքին երբեք ալ գերծ չենք անոր փորձութիւններէն, որուն համար նոյնինքն Պետրոս Առաքեալ պիտի ըսէ. **«Արթուն եւ պարասար եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սաքանան առիծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ»** (Ա Պետր 5:8): Անոր համար ալ Պօղոս Առաքեալ կը թելադրէ, որ Աստուծոյ սպառազինութիւնը մեր վրայ առնելու, իսկ Պետրոս Առաքեալ կ'ըսէ Քրիստոսի օրինակը կու տայ: Այդ ընելով, սակայն, նաեւ պարասար եղէք ամէն փեսակի անարգանքի եւ հայհոյութեան (4:4), որովհետեւ անոնք որոնք փակաւին մեղքի սարուկն են իրենց համար փարօրինակ է քրիստոնեային ապրելակերպը:

Ահա Պետրոս Առաքեալ օգրագործելով Քրիստոսի չարչարանքները, որ մեզի համար չարչարուեցաւ, եւ զայն նմանցնելով մկրտութեան խորհուրդին, ինչ որ Պօղոս Առաքեալ կը ներկայացնէ Հռոմայեցիներուն նամակին մէջ ըսելով. **«Քրիստոսի միանալով մկրտուեցանք՝ մկրտութեամբ անոր մահուան հաղորդակից դարձանք: Այսինքն՝ մկրտութեամբ անոր հետ միասին թաղուեցանք եւ մահուան հաղորդ եղանք, որպէսզի ինչպէս Քրիստոս Հօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք նորոգուած կեանքով ապրինք»** (Հռոմ 6:3-4): Ահա մկրտութեամբ երբ Քրիստոսի մահուան հաղորդակից կը դառնանք, ուր այլևս մեղքը իշխանութիւն չունի, որովհետեւ Քրիստոսով թաղուեցանք, բայց ան փակաւին գոյութիւն ունի, անոր համար ալ փակաւին կը պարտաւորուինք, որուն համար ալ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. **«Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը»:** Ուստի այնպէս ապրեցէք, որպէս թէ դուք ձեզ մեռած համարեցէք մեղքին (Հռոմ 6:11): Ձեր վրայ առէք Յիսուս Քրիստոսի նմանութիւնը, անով սկսելու օրը, որովհետեւ առանց այդ նմանութեան, ինչպէս նաեւ առանց Աստուծոյ սպառազինութեան կարելի պիտի չըլլայ պարտաւորուիլ օրուան պարտաւորութեան: Ահա այդ փոփոխութեան արդիւնքը կ'ըլլայ. **«այլևս չ'ապրիք մարդկային ցանկութիւններով, այլ՝ Աստուծոյ կամքին համաձայն կ'ապրի իր կեանքի մնացեալ ժամանակը»** (2 հմբ):

Պետրոս Առաքեալ նկատի առած այս վիճակը, որուն մէջէն կ'անցնի քրիստոնեայ հաւաքացեալը, ուր յանկարծ չարը գալով կրնայ մեզ այնպէս մոլորեցնել, ըսելով մէկդի դիր այդ սպառազինութիւնը, ապրիք քու կեանքդ աւելի ազապ: Աստուած, սակայն, Իր ողորմութեամբ մեզ կանչեց, մեզ նոր արարած ընելու, մեզ կանչեց ոչ թէ մեզմէ պարզապէս մեղքէն դուրս բերելու, այլ մեզ մեղքէն ազապելու, ու անով Աստուծոյ կամքին համաձայն ապրելու: Ի՞նչ է Աստուծոյ կամքը: Աստուծոյ կամքն է որ մենք սրբութեան կեանք ապրինք, որովհետեւ մեզ կանչողը՝ Աստուած Ինք սուրբ է: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. **«Ուստի մոռացէք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէք հոգով՝ ձեր մարմնակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պարկերին համաձայն սրբեղծուած, եւ ապրեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ եւ սրբութեամբ»** (Եփես 4:22-24):

Յրդ համարով Պետրոս Առաքեալ կու գայ յիշեցնելու թէ անցեալին բաւական ժամանակ անցուցիք հեթանոսներու կամեցած ձեռով ապրելու: Բաւական ժամանակ: Երեւակայեցէք եթէ մէկը 50 փարեկանին դարձի եկաւ Քրիստոսի ճանչնալու եւ ընդունելու իբրեւ Տէր եւ փրկիչ, հիմա իրեն որքան կը մնայ ապրելու, որուն արդէն 50 փարիները ապրեցաւ հեթանոսներու կամեցած կերպով: Ահա Պետրոս Առաքեալ կը պարտադրէ որ ալ այդ ձեռով չ'ապրիս: Հակառակ այն իրողութեան, որ հեթանոսներ փարօրինակ կը գրնեն, որ այդ ձեռով դուք չ'էք ապրիր, առաւել եւս կը հայհոյեն ձեզ: